Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԵՊՀ,
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ
ԱՐՊՀ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇՈՒՇԻՆ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Շուշիի հին պատմության, հիմնադրման, կառուցապատման, նրա առանձին հուշարձանների էթնիկ պատկանելության խնդիրները մեկ անգամ չէ, որ հայտնվել են Ադրբեջանի զավթողական նկրտումների «հիմնավորումների» ցանկում: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանի կառավարությունն ու մտավորականությունը իրենց ժողովրդին քարոզել են մի առասպել, ըստ որի Շուշին ծագել և գոյատևել է որպես ադրբեջանական քաղաք և ադրբեջանական մշակույթի բնօրրան: Եթե մինչև Շուշիի ազատագրումը տարածքի հայկական պատկանելությունը հստակորեն ցուցելու համար հայ հետազոտողները ստիպված էին բավարարվել առավելապես գրավոր աղբյուրների և նոր ժամանակների (18-19-րդ դդ.) իրողությունների քննությամբ, ապա այսօր հնարավորություն կա լայնորեն օգտագործել հնագիտական, վիմագրական, տեղագրական բնույթի բազմաթիվ աղբյուրները, որոնք ֆիզիկապես մատչելի են դարձել միայն Շուշիի ազատագրման շնորհիվ: Հնարավորություններ, որոնք, ցավոք, համարյա չեն օգտագործվում:

Այս առումով 2005 թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախմբի հետախուզական ընդարձակ պեղումները[1] մնում են եզակի մի միջոցառում: Երկաթեդարյան

1 Պեղումներն իրականացվել են «Շուշի» հիմնադրամի նախաձեռնությամբ և «Ժան Պողոսյան և որդիներ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Արշավախումբը ղեկավարել է պ.գ.դ. Համլետ Պետրոսյանը, մասնակցել են հնագետներ Նորա Ենգիբարյանը, Վարդգես Սաֆարյանը, ճարտարապետ Մանուշակ Տիտանյանը և Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Աշոտ Հարությունյանը:

դամբարանների պեղումներին զուգահեռ այն ներառեց նաև միջին դարերի հուշարձանների պեղումները, որոնց անմիջական նպատակն էր ցուցել Շուշիի սարահարթի բնակեցված լինելն ու տեղում հայկական մշակույթի առկայությունը մինչև այստեղ Փանահի հայտնվելը (18-րդ դարի կեսեր): Պեղումներն իրականացվել են ստորև թվարկվող հուշարձաններում, արդյունքներն ավելի քան խոսուն են:

Նկ. 1. Հայ-հունական գերեզմանոցի մի հատվածը պեղումներից հետո՝ 12–13-րդ դդ. խաչքարով հանդերձ:

Հայ-հունական և հին հանգստարանների հետախուզական պեղումները: Շուշիի արևելյան պարսպապատին կից գտնվող Հայ-հունական գերեզմանոցի հին հատվածի պեղումները ցույց տվեցին, որ այստեղ 12–13-րդ դարերում եղել է հայկական գերեզմանոց (նկ. 1), որի խաչքարերը հետագայում՝ 19-րդ դ. կեսերին օգտագործվել են նոր թաղումների

վրա: Այստեղ վավերացված 12-13-րդ դդ. հինգ խաչքարերը վկայում են, որ Շուշիի սարահարթը հայերի կողմից բնակեցված էր Խաչենի հայկական իշխանության ամենածաղկուն դարաշրջանում: Այժմ հերթական խնդիրն է գտնել և համապատասխան բնակավայրը, որին պատկանել են խաչքարերը: Հետաքրքիր են նաև քաղաքի Հին հանգստարանի մի մասի մաքրման հետևանքով բացված տապանաքարերը: Նրանցից մեկը թվագրված է 1771 թ., ինչը, փաստորեն, այսօր Շուշիի՝ պարսպապատերի մեջ առնված տարածքի ամենահին հայերեն արձանագրությունն է:

Կարկառ ամրոցի հայտնաբերումն ու պեղումները. Չափազանց ուշագրավ կարելի է համարել Հունոտի կիրճի՝ Ավանի կարան կոչվող ամրացված քարանձավի մոտի ամրոցի հետախուզական պեղումները: Նրա վերին հարթակի մաքրման ժամանակ բացված թոնրի շրջակայքից և լիցքից գտնվել են 12-14-րդ դդ. վերաբերող նյութերի բազմաթիվ նմուշներ (նկ. 2): Հատուկ նշելի են մոնղոլական տիպի նետասլաքն ու չինական սելադոնի բեկորը, որոնք ոչ միայն ապացուցում են, որ Շուշիի սարահարթի արևելյան՝ Հունոտի կիրճը բնակեցված էր այդ ժամանակ, այլև, որ այստեղով անցնում էր առևտրական մի ճանապարհ, որի պահպանության համար էլ Խաչենի իշխանները ստեղծել էին այս ամրությունները: Այս նոր տվյալները հիմք են տալիս հենց այստեղ տեղադրել պատմիչների հիշատակած Կարկառ ամրոցը, որը 17-րդ դ. վերջերին՝ հայ ազատագրական շարժումների ժամանակ վերակառուցվեց և ստացավ Ավանի կամ Փոքր սղնախ անունը: Կիրակոս Գանձակեցին Կարկառ ամրոցը թվում է Հասան Ջալալին պատկանող («զհայրենիս») այն երեք ամրոցների շարքում, որոնք խլել էին թուրքերն ու վրքացիները, իսկ Բաթու խանը՝ իր որդի Սարթախի միջնորդությամբ դրանք ետ էր վերադարձրել իշխանին. «Եւ տարեալ առ հայրն իւր, մեծապատիւ արար և ետ ի նա զհայրենիս իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿարկառն,

զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»:[2]

Նկ. 2. Իրեր՝ գտնված Կարկառ ամրոցի հարթակի պեղումներից, 12-14-րդ դդ.:

Նախնական եզրակացությունն այն է, որ ոչ թե պարսիկ ու թուրք եկվորները, այլ նրանցից առաջ հայ Մելիք-Շահնազարն ու Ավան հարյուրապետը 18-րդ դարի սկզբներին ամրացրել-վերակառուցել են արդեն դարեր առաջ հայ իշխանների կողմից հիմնված ու կարևորված ամրակետերը:

Շոշվա սղնախի հայտնաբերումն ու պեղումները. Շուշիի պարսպապատերի մանրամասն դիտումների և համապատասխան մասնագիտական գրականության քննությամբ մեզ հաջողվել է պարզել, որ Շուշիի ներկա տարածքում մինչև Փանահի կողմից պարիսպների կառուցումը (18-րդ դարի 50-ական թվականներ) եղած ամրոցներից մեկի ավերակները համընկնում են Մխիթարաշենի դարպասների մոտի պարսպահատվածին: Այստեղ ձեռնարկած լայնածավալ պեղումները, թեև դեռ

[2] *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց,* Ե., 1961, էջ 359:

հեռու են ավարտից (նկ. 3), բայց արդեն տվել են լուրջ տվյալներ, որոնք վկայում են, որ պարսպապատերից ներս գտնվող այս հատվածը բնակեցված է եղել գոնե մ.թ.ա. I հազարամյակի սկզբից:



Նկ. 3. Շոշվա սղնախը. պեղված հատվածի ընդհանուր տեսքը:

Սա մի լուրջ տվյալ է վերջ դնելու Շուշիի սարահարթն առաջին անգամ Փանահի կողմից բնակեցնելու ադրբեջանական առասպելին: Ամրոցը գտնվում է Շոշ գյուղի համարյա դիմաց և ընդամենը 250 մ է հեռու խաչքարերով գերեզմանոցից: Գուցե ի դեմս այս ամրոցի հնարավոր լինի վավերացնել հռչակավոր Շոշի քարը կամ սղնախը, որից էլ, ըստ որոշ կարծիքների, Շուշի քաղաքն ստացել է իր անվանումը:

Շուշիի պեղումները կարևոր մի փուլ են հայրենի պատմության ու մշակույթի հետազոտության, վերականգնման, պրոպագանդման և նրա լավագույն ավանդույթների կիրառման մեծ ճանապարհին: Ցավոք պիտի փաստել, դրանք այդպես էլ չդարձան պետական հոգածության առարկա և շարունակություն չունեցան: